Վասն մահագրականի

ԹԱՆԳԱՐԱՆԻ ԶԻՆՈՒՈՐԸ՝ ՇԱՀԷՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ (1934-2021)

Արուեստաբան Շահէն Խաչատրեանի մասին հեշտ է խօսելը, քանզի ապրել է ճշմարիտ արուեստագէտի, իսկական հայ մտաւորականի կեանք, որը կատարեալ նուիրումի օրինակ է, բայց՝ ե՛ւ դժուար է, քանզի նրա տարբերուող տեսակը յաճախ է հանդիպել այլազան խոչընդոտների, որոնց մասին խօսելը միայն իրեն չի առնչւում:

Ծնուել է 1934 Սեպտեմբերի 28ին Հալէպ, Սիրիա. էրզրումցի Գէորգի եւ Տիգրանուհու 4 զաւակներից 3րդն էր: Երեխայ ժամանակ երգում է Հալէպի՝ քարտաշ-որմնադիր հօր կառուցած Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու երգչախմբում. նկարչութեամբ տարուած էր դեռեւս Սահակեան դպրոցում ուսա-նելու տարիներին:

1946ին ընտանիքի հետ հայրենադարձուած եւ Երեւանում բնակութիւն հաստատած պատանին շուտով առերեստում է խորհրդային երկրի՝ իր համար անընմբռնելի, անհաւատալի իրականութեանը, երբ հոկտեմբերեան յեղափոխութեան տարեդարձին նուիրուած դպրոցական ցերեկոյթում Չարենց է արտասանում: «*Բեմից նկատեցի, որ շատերը դուրս են գալիս դահլիճից, բայց շարունակեցի աւելի կրքոտ: Դահլիճը պոռթկաց բուռն ծափահարութիւններով: Չէի հասցրել անցնել բեմի եզրը, երբ կոպտօրէն բռնեցին ինձ, երեսով խփեցին պատին: Արիւնը յորդեց, ընկայ գետնին, շարունակեցին խփել ոտքերով: Միակը, որ յիշում եմ, տնօրէնի խօսքերն էին. "Շա՛ն որդի, մենք, ինչ է, Սիբի՞ր ենք գնալու քո պատճառով"*»՝ տասնամեակներ անց իր *Թանգարանի զինուորը* գրքում գրում է Շահէնը:

Դէպքից յետոյ որոշ ժամանակ դպրոց չի յաճախում, շինարարութիւնում, որտեղ հայրն էր աշխատում, սովորում է պատ շարել: Յետոյ հրապուրւում է լողով, եւ, ինչպէս ամէն ինչին կեանքում՝ տրւում է անմնացորդ: Արդիւնքը չի ուշանում. 1949ի ձմռանը պատանին սահմանում է առաջին հանրապետական մրցանիշը:

Շուտով դիպուածը, թէ՞ նախախնամութիւնը փոխում է Շահէնի կեանքը մէկընդմիշտ: Նա մի հանդէսում տեսնում է Այվազովսկու՝ ծովը պատկերող մի նկար. «*Եւ արուեստի հանդէպ չորս տարով մոռացութեան մատնուած սէրս հրաբխի նման յանկարծ ժայթքեց ու ալեկոծեց ինձ: Հորիզոնն ասես լուսաւորուեց, ու պարզ դարձաւ, թէ յանուն ինչի պէտք է ապրել: Ամէն ինչ մղուեց երկրորդ պլան, մնաց միայն արուեստը*»: Դա 1950 թուականն էր: Ֆիզկուլտուրայի ինստիտուտի ուսանողը, լողի՝ Հայաստանի պատանիների ախոյեանն ու մրցանիշակիրը սկսում է «արուեստի գծով» ինքնակրթութիւնը, Խորհրդային Միութեան տարբեր քաղաքներ մրցումների գնալիս յաճախում է թանգարաններ, հաւաքում նկարների վերատպութիւններ, որոնցով կազմում է իր առաջին ալբոմը…

1959ը յիրաւի շրջադարձային էր. Շահէնն աշխատանքի է անցնում Հայաստանի ազգային պատկերասրահում եւ շուտով սկսում է հեռակայ ուսանել Լենինգրադի

(այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) Իլիա Ռեպինի անուան գեղանկարչութեան, քանդակագործութեան եւ ճարտարապետութեան ինստիտուտում (նախկին գեղարուեստի ակադեմիան): Վեց տարուայ փոխարէն սովորելով 4,5 տարի, նա 1965ին աւարտում է՝ ստանալով արուեստաբանի որակաւորում:

1967ի գարնանը Պատկերասրահի երիտասարդ արուեստաբանն առաջին անգամ մեկնում է արտասահման՝ Հունգարիա, ուղեկցում Մարտիրոս Սարեանի ցուցահանդէսը եւ այնտեղից սկսում է նամակներ գրել Վարպետին այն մասին, թէ հունգարացիներն ինչ լաւ են ընդունում նրա արուեստը: Շուտով այդ նոյն շէնքում բացւում է Պաբլօ Պիկասոյի ցուցահանդէսը, եւ Շահէնը շարունակում է Վարպետի հետ կիսել իր տպաւորութիւնները:



Այդ ժամանակ Երեւանի կենտրոնում կառուցւում էր Մարտիրոս Սարեանի տունթանգարանը եւ Վարպետը, թանգարանի ապագայ տնօրէնի մասին խօսակցութեան ժամանակ, յիշում է իրեն Բուդապեշտից նամակներ գրողին: Չի ուշանում վերին մարմինների հակադարձութիւնը. «Շահէ՞նը: Նրա մասին խօսք լինել չի կարող: Նախ՝ շատ երիտասարդ է, երկրորդ՝ անկուսակցական է, երրորդ՝ հայրենադարձ է»: «Ինձ համար դա նշանակութիւն չունի,- վճռաբար առարկում է Սարեանը:- Կանչէ՛ք, ուզում եմ հետը խօսել»:

Շարունակութիւնը հեքիաթի է նման. 1967 Օգոստոս, Պատկերասրահում աշխատանքից ազատման դիմում գրած երիտասարդը փողոցում հանդիպում է Վարպետի որդուն՝ կոմպոզիտոր Ղազարոս Սարեանին, որը, հօր պատուէրով, հենց նրան էր փնտռում: «*Կէս ժամ անց երկչոտ կանգնած էի Վարպետի առաջ: Նա հարցրեց, թէ որտեղից են ծնողներս, յետոյ ասաց. "Ես ցանկանում եմ, որ դու դառնաս իմ ընկերը, եւ մենք միասին այստեղ աշխատենք"*»:

Սարեանը նամակ է գրում Հայաստանի մշակոյթի նախարարին.

...Վերջապէս գտնուեց թանգարանային աշխատանքի շատ լաւ փորձ ունեցող մի երիտասարդ արուեստաբան, որը կարող է ղեկավարել թանգարանը եւ ծաւալել իսկական աշխատանք: Դա Շահէն Խաչատրեանն է:

Խնդրում եմ Ձեզ նրան թանգարանի դիրեկտոր նշանակել, մանաւանդ որ նա պետական պատկերասրահից այլ աշխատանքի անցնելու մտադրութիւն ունի:

Խորին յարգանքով՝ Ձեր Մարտիրոս Սարեան, 14. IX. 1967թ.:

Պատմում են, որ թանգարանի տնօրէն, արուեստաբան Շահէն Խաչատրեանը ոչ միայն ինք էր կազմակերպում բոլոր ցուցադրութիւնները, այլեւ անձամբ էր կա-

խում կտաւները, անձամբ էր լուանում թանգարանի ապակիներն ու գորգերը, մաքրում մայթի ձիւնն ու սառոյցը: Իսկ ամենայիշատակելին պաշտելի Վարպետի հետ յարաբերութիւններն էին: Դրանք միայն նկարիչ-թանգարանի տնօրէն յարաբերութիւններ չէին, միայն կենդանի դասական-երկրպագու յարաբերութիւններ չէին: Շահէնը յիրաւի որդիական սիրով ու խոնարհութեամբ է ծառայել Վարպետին:

Մարտիրոս Սարեանի տուն թանգարանը հիմնադրուել է 1967ին, երբ նկարիչն արդէն 87 տարեկան էր, իսկ ինքը՝ 33: Շահէնն ամէն օր հանդիպում էր, զրուցում Վարպետի հետ, գրի առնում նրա մտքերը, անընդհատ լուսանկարում էր նկարելիս, հանգստանալիս, հիւրերի հետ (նա նկարել է շուրջ 2 հազար լուսանկար)... Եւ ամենակարեւորը՝ ամէն օր Սարեանի սեղանին թուղթ ու մատիտներ, ֆլոմաստէրներ էր դնում, որ Վարպետը նկարի...

Վարպետի ծննդեան 90ամեակի կապակցութեամբ Խաչատրեանը հրատարակում է *Մարդը բնութիւն է, բնութիւնը՝ մարդ* գրքոյկը, որտեղ հաւաքել էր իր դիտարկումներն ու գրառումները, որոնք բացայայտում են ոչ միայն մեծ նկարիչ, այլեւ՝ մեծ փիլիսոփայ Մարտիրոս Սարեանին... Հեղինակի յորդորով Վարպետն անում է այդ գրքոյկի նկարազարդումները՝ հարստացնելով իր ստեղծագործութիւնը նոր գծապատկերներով:

Թանգարանն իր գործունէութիւնը սկսել է Վարպետի նուիրած 30 գեղանկարչական գործերով եւ 20 գծանկարներով: 37 տարուայ ընթացքում (Շահէն Խաչատրեանը տնօրինել է թանգարանը 1967-2004ին), սարեանական ստեղծագործութիւնների թիւը հասնում է 234ի, որոնք ձեռք են բերուել կամ նուէր ստացուել այս անդուլ, մեղուի ժրաջանութեամբ աշխատող մարդու շնորհիւ: Իդէպ՝ քիչ չէին նաեւ անձամբ Խաչատրեանի՛ նուիրած գործերը, այն կտաւներն ու գծանկարները, որոնք նա ձեռք էր բերում իր խնայողութիւններով, կամ նուէր էր ստանում տարբեր հաւաքորդներից, նաեւ՝ հենց Վարպետից:

Շահէն Խաչատրեանի ղեկավարած տարիներին Սարեան թանգարանը դառնում է մեծանուն Վարպետի ստեղծագործութեան ուսումնասիրման եւ հանրահռչակման կենտրոն: Նրա կազմակերպած 100ից աւել ցուցահանդէսները Հայաստանի եւ ԽՍՀՄ տարբեր քաղաքներում, Ֆրանսայում, Գերմանիայում, Իտալիայում, Եգիպտոսում, Սուրիայում, տարբեր լեզուներով հրատարակած ալբոմներն ու կատալոգները Մարտիրոս Սարեան երեւոյթի արժեւորման եւ աշխարհին ներկայացնելու հրաշալի ճիգեր էին...

Արուեստաբանի միւս լուսատու աստղը, վստահաբար, Յովհաննէս Այվազովսկին էր: Շահէն Խաչատրեանի նպատակը «ռուս» նկարիչ Իւան Այվազովսկուն հայացնելն էր: Դրա համար Խաչատրեանը Խորհրդային երկրի տարբեր թանգարաններից հաւաքում եւ 1979ին Սարեան թանգարանում բացում է ծովանկարչի՝ հայկական թեմաներով արուած շուրջ 40 նկարից կազմուած ցուցահանդէս: Արուեստաբանն այդ թեմային հետամուտ է լինում ամբողջ կեանքի ընթացքում. Այվազովսկուն նուիրուած մեծ ու փոքր ցուցահանդէսներ ԽՍՀՄում, արտերկրում, բազմաթիւ գիրք-ալբոմներ լոյս տեսած մեծ պատկերագրքերը:

Չստեղծուի տպաւորութիւն, թէ Շահէն Խաչատրեան արուեստաբանին հետաքրքրում էին միայն Սարեանն ու Այվազովսկին: Մինաս Աւետիսեան, Յակոբ Յակոբեան, Գառզու, Ժանսէմ, Լաւինիա Բաժբէուկ-Մելիքեան, Ռոբերտ Էլիբեկեան, Էդգար Շահին, Ռաֆայէլ Աթոյեան, Արշիլ Գորկի, Շառլ Ադամեան, Վարդան Մախոխեան եւ ուրիշ շատ հայաստանցի ու սփիւռքահայ նկարիչներ են եղել արուեստաբանի հետաքրքրութիւնների ծիրում:

Նրա յօդուածներն ու գիրք-ալբոմները, Հայաստանում եւ Սփիւռքում ունեցած բազմաթիւ ելոյթներն ու դասախօսութիւնները մի նպատակ էին հետապնդում՝ Հայաստանում ճանաչելի դարձնել սփիւռքահայ նկարիչներին եւ հակառակը՝ Սփիւռքում լաւագոյնս ներկայացնել հայաստանաբնակ արուեստագէտներին, դրանով իսկ հանդիսանալով իւրօրինակ կամուրջ մեր ժողովրդի այդ երկու հատուածների միջեւ: «*Քանի՜-քանի՜ խանդավառ դահլիճներ է տեսել Շահէնը: Իր խօսքի ուժով քանի՜-քանի՜ անտարբեր սրտեր են վառուել արուեստի հրով: Քանի՜-քանի՜ կեանք տեսած, ամէն ինչից ձանձրացած ունկնդիրներ են վառուող աչքերով մօտեցել դասախօսութիւնը աւարտած Շահէնին: Այն, ինչի մասին հաճոյքով յիշում եւ գրում եմ, չի վերաբերում միայն Հալէպին, Դամասկոսին, Բէյրութին: Նրան սպասում էին Կանադայից Ֆրանսիա, Միացեալ Նահանգներից Ռուսաստան եւ այլուր: Նրա եռանդն անսպառ էր: Իր սրտին խօսող որեւէ գաղափարի համար ովկիանոսներ ու մայրցամաքներ անցնելը՝ սովորական բան*»,- վկայում է արուեստաբանի կրտսեր ընկերներից մէկը՝ նկարիչ Հրազդան Թոքմաջեանը:

Աշխարհով մէկ սփռուած հայ նկարիչները, ի դէմս Խաչատրեանի, գտնում էին ոչ միայն ազնիւ բարեկամի, այլեւ Հայաստանի հետ կապուելու, Հայաստանում ցուցադրուելու, ճանաչուելու ճանապարհը... Եւ ամէն անգամ այդ շփումները Շահէն Խաչատրեանը ծառայեցնում էր նաեւ Հայաստանի ազգային պատկերասրահն այդ նկարիչների գործերով հարստացնելու ազգաշահ գործին: Նրա ջանքերի շնորհիւ միայն Գառզուից շուրջ 70 աշխատանք է հասել Պատկերասրահ, մեծաթիւ արժէքաւոր աշխատանքներ՝ Ժանսեմից: «*Նկարիչը խոստացել էր, որ իր փարիզեան խոշոր ցուցահանդէսից յետոյ ինձ թոյլ կը տայ մի ստեղծագործութիւն ընտրել Պատկերասրահի համար: Երբ ես մի պահ մօտեցայ «Ասեղնագործուհիներին», ինձ թուաց նկարիչը տատանուեց: Պարզուեց, որ Ժանսեմը երբեք չի բաժանուել այդ կտաւից: «Լաւ,- ասաց,- տար, հոս հայկական բան մը կայ: Այս մանչուկը (կտաւի կենտրոնում պատկերուած պատանին) ես եմ»: Իսկ 1995ին նկարիչն ինձ յանձնեց «Թափօրը»՝ իրեն բնորոշ եւ, անտարակոյս, լաւագոյն գեղանկարչական գործերից մէկը*»՝ գրում է Խաչատրեանը *Թանգարանի զինուորը* գրքում:

1990ին Սարեան թանգարանի տնօրէն Շահէն Խաչատրեանը համատեղութեամբ ստանձնում է նաեւ Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրինութիւնը: Անմիջապէս սկսում է Պատկերասրահի շէնքի նորոգումը, ապահովում է դահլիճների անվտանգութիւնը: 1992ին նրա նախաձեռնութեամբ Մարսէյում հրատարակւում է Պատկերասրահի առաջին, եռալեզու ուղեցոյցը: Արցախեան ազատամարտի այդ ծանր տարիներին Պատկերասրահում հիմնադրուած «Սարգիս Խաչենց» հրատարակչատունը Խաչատրեանի՝ սփիւռքահայ բարերարներին ներգրաւելու շնորհիւ սկսում է լոյս ընծայել մէկը մէկից արժէքաւոր գրքեր... Շահէն Խաչատրեանը Ազգային պատկերասրահում աշխատած 12 տարիների ընթացքում հարստացնում է այն շուրջ 400 գեղանկարներով եւ գծանկարներով, որոնց նիւթական արժէքը միլիոնաւոր դոլարներով է հաշւում, իսկ հոգեւոր արժէքն անչափելի է...

2003ին մշակոյթի նախարարի պահանջով Շահէն Խաչատրեանը թողնում է Ազգային պատկերասրահի տնօրէնի պաշտօնը, իսկ 2004ին՝ հեռացւում է նաեւ Սարեան թանգարանից: Սիրելի աշխատանքից զրկուելը ծանր հարուած էր նուիրեալ արուեստագէտի համար: Բարեբախտաբար նրան աշխատանքի է հրաւիրում ամենայն հայոց հայրապետ Գարեգին Բ.ը: Խաչատրեանը դառնում է կաթողիկոսի մշակոյթի գծով խորհրդականը, յետոյ՝ «Խրիմեան» թանգարանի տնօրէնը: Եւ նորից լծւում է իր սիրելի գործին՝ ցուցահանդէսներ, ալբոմներ, նկարահաւաքչութիւն...

2011-17՝ արուեստաբանը հրատարակում է պատանիներին ուղղուած «Ճանաչիր եւ սիրիր» պատկերագրքերի շարքը, նուիրուած՝ հայ նկարիչներին: Տասնհինգ պատկերագրքերից բաղկացած այս շարքում տեղ է գտել նաեւ Եղեռնին նուիրուած հատորը, որը ներառում է շուրջ 60 հայ նկարչի 160 ստեղծագործութիւն: Միայն երեւակայել կարելի է, թէ ինչպիսի՜ մանրակրկիտ եւ յամառ աշխատանք է պահանջում այդպիսի գործը: «Ճանաչիր եւ սիրիր» շարքի վերջին՝ 15րդ հատորը *Թանգարանների հարստացումն* է, որը ներառում է այն գործերը, որոնք Հայաստան են բերուել հեղինակի ջանքերի շնորհիւ: Այստեղ, սակայն, նկատելի է մի ցաւալի իրողութիւն, որը շրջանցել չենք կարող. կեանքի վերջին տարիներին արուեստագէտը տառապում էր հիւանդութեամբ, որը դանդաղ սպանում էր նրա յիշողութիւնը, ինչն անդրադարձել է յատկապէս նրա այս վերջին աշխատանքի վրայ՝ խօսքը դարձնելով ճապաղ, ցաքուցրիւ... Ցաւալի է, որ հրատարակիչները ուշադրութիւն չեն դարձրել այդ փաստին, չի եղել խմբագիր...:

Արուեստաբանի շատ ծրագրեր հիւանդութիւնը անկատար թողեց. պէտք է շարունակէր *Ճանաչիր եւ սիրիր* շարքը (ի սկզբանէ նախատեսուած էր 20 գիրք), տարիների ընթացքում Վարպետի հետ հանդիպումների, իր արած լուսանկարների, ձայնագրութիւնների, գրառումների հիման վրայ մտադիր էր հրապարակել *Զրոյցներ Սարեանի հետ* գիրքը, ուզում էր հրապարակել նաեւ ամերիկահայ նկարիչ Մանուէլ Թոլեգեանի եւ Վիլիամ Սարոյեանի՝ արուեստին նուիրուած երկխօսութիւնների գիրքը, Երեւանում ուզում էր հիմնել Յովհաննէս Այվազովսկու թանգարանը, իսկ Մայր Աթոռում՝ Արշիլ Գորկու...

Շահէն Խաչատրեանը 1984ին արժանացել է Հայաստանի արուեստի վաստակաւոր գործչի կոչման, 1996ին պարգեւատրուել է ՀՀ «Մովսէս Խորենացի» մեդալով, 1999ին դարձել է Գիւմրու պատուաւոր քաղաքացի, իսկ 2014ին՝ ծննդեան 80ամեակի առիթով, արժանացել է Հայ Առաքելական Եկեղեցու «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» պատուոյ բարձր շքանշանին:

Այդուհանդերձ, նրա թերեւս ամենամեծ գնահատականը տուել է ինքը՝ Մարտիրոս Սարեանը՝ **թանգարանի զինուո՛ր:** Մեր կողմից աւելացնենք, որ այդ Զինուորը հայ մշակոյթի մի ամբողջ դարաշրջան է մարմնաւորել՝ տեսանելի եւ անտես թելերով կապուած լինելով հայ նկարիչների միքանի սերնդի հետ՝ Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի...

Ստորեւ՝ Շահէն Խաչատրեանի հրատարակած գրքերը.- *Մարդը բնութիւն է, բնութիւնը՝ մարդ*, (1970), *Մարտիրոս Սարեան* (հայերէն, ռուսերէն, անգլերէն պատկերագիրք, 1980), *Մ. Сарьян, избранные произведения, на русском и английском* (1983), *Цветы Сарьяна. Альбом* (Լ. Միրզոյեանի հետ, 1987), *Martiros Saryan* (Ա. Կամենսկու հետ, 1988), *Мартирос Сарьян, сказки и сны* (անգլերէն եւ ռուսերէն, 1995), *Sarian* (անգլերէն եւ ռուսերէն, 2003), *Martiros Sarian* (անգլերէն, 2001), *Սարեանը եւ Եգիպտոսը* (հայերէն, անգլերէն, 2001), *Sarian* (ֆրանսերէն, 2009), *Մարտիրոս Սարեան, ընտրանի* (2009), *Мартирос Сарян, избранное* (2009), *Այվազովսկի* (հայերէն, ռուսերէն, անգլերէն, 1984), *Айвазовский, живопись* (1989), *Айвазовский известный и неизвестный* (անգլերէն եւ ռուսերէն, 2000, 2013), *Aivazovski la poésie de la mer* (2007), *Այվազովսկի* (հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն), *Aivazovsky* (անգլերէն, արաբերէն, 2014), *Այվազովսկի, ծննդեան 200ամեակին* (2017, ռուսերէն՝ նոյն տարին), *Айвазовский* (ռուսերէն եւ անգլերէն, 2019), *Айвазовский, Апостол мира и гуманизма* (ռուսերէն եւ հայերէն, 2008), *Գաբրիէլ Արքեպիսկոպոս Այվազեան (Այվազովսկի), ընտրանի* (2012), *Le chant de la mer*

(1996), *Minas Avetisian* (անգլերէն, 1996), *Մինաս Աւետիսեան* (հայերէն, ռուսերէն, անգլերէն, 2004), *Hagop Hagopian* (անգլերէն, 1997), *Յակոբ Յակոբեան* (հայերէն, ռուսերէն, 2016), *Rafael Atoy*an (անգլերէն, 1999), *XIX-XX դարերի հայ նկարիչներ* (բ. հրատ., ֆրանսերէն, հայերէն, անգլերէն, 2001), *Յաւի գոյնը. Եղեռնի անդրադարձը հայ նկարչութեան մէջ* (հայերէն, անգլերէն, 2010), *Ֆրանսահայ կերպարուեստ* (1991. գիրքը գրուել էր 1960ականներին, բայց խորհրդային տարիներին չէր կարող հրապարակուել...), *Պետրոս Կոնտրաջեան-Պետօ, 1905-1956* (հայերէն, ֆրանսերէն, արաբերէն, 2004), *Թանգարանի զինուորը. նկարահաւաքի պատմութիւններ* (2007, 2014, ռուսերէն՝ 2007), *Հայաստանի Ազգային Պատկերասրահ. Ուղեցոյց* (Սիմոնա Դամոտի հետ, 1992): Իր «Ճանաչիր եւ սիրիր» մատենաշարով հայերէն եւ ռուսերէն հրատարակուել են Յակոբ Էքիզեանը, Պետրոս Կոնտրաջեան-Պետօն, Մարտիրոս Սարեանը, Արշիլ Գորկին, Մինաս Աւետիսեանը, Յակոբ Յակոբեանը, Յովհաննէս Այվազովսկին, Վարդգէս Սուրէնեանցը, Յակոբ Յովնաթանեանը, Էդգար Շահինը, Վարդան Մախոխեանը, Գառզուն, Ժանսեմը: Այս շարքի մէջ են մտնում նաեւ *Հայոց Եղեռնը* եւ *Թանգարանների հարստացում* գրքոյկները: Նա համահեղինակել, կազմել, խմբագրել եւ առաջաբանն է գրել մի շարք գրքերի՝ *Արշիլ Գորկի. նամակներ* (Սէյրանուհի Գեղամեանի հետ, 2005), Գ. Գէորգեանի *Ջութակի հոգին. Ժան Տէրմերկերեան* (Է. Մանուկեանի հետ, 2012), Օնոփրիոս Անոփեանի *Բանաստեղծութիւնները*ը (2010) եւ թարգմանել ու հրատարակել է Ռուբէն Սեւակի *Багровая тоска* գիրքը (2004):

Շահէն Խաչատրեանը մահացել է 2021ի Հոկտեմբերի 22ին, Երեւանում:

ԼԻԼԻԿ ՍՏԵՓԱՆԵԱՆ (lilikstep@gmail.com)